




Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհան Ոսկեբերանի գործերը հայ թարգմանական գրականության պատկառելի մասն են կազմում: Մեզ են հասել հեղինակի բազմաթիվ ճաներ, մեկնություններ և այլ բնույթի գործեր, որոնք բանասիրական-պատմական կարևոր սկզբնաղբյուրներ լինելուց զատ, արժեքավորվում են նաև մեր լեզվի պատմության զանազան հարցերի լուսաբանման տեսակետից: Ուշադրության արժանի է հատկապես թարգմանությունների բառապաշարը, որի քննությունը առաջօր բավարար չի կարելի համարել: Առկա են միայն որոշ բառաքննական դիտարկումներ, ուղղումներ (Ն. Բյուզանդացի, Ա. Վարդանյան, Հ. Աճառյան): Հիշենք, որ Ոսկեբերանի գրվածքների մեծագույն մասը թարգմանվել է V դարում, և այդ տեսակետից ավելի է կարևորվում լեզվական քննությունը: Ի՞նչ յուրահատկություններ է դրսևորում Ոսկեբերանի բառապաշարը: Առաջին հերթին, այն աչքի է ընկնում իր հարըստությամբ, ճոխությամբ: Իրավացի է Ա. Վարդանյանը, գրելով. «Դասական հայերենի անվիճելի հարստության մասին կազմուած գաղափարը նուազ ու նուաղ կրլլար անշուշտ, եթէ Յովհաննու Ոսկեբերանի մեկնության գործոց թարգմանությունները չունենար հինգերորդ դարը իր մատենագրության շարքին մէջ»: (Հանդէս ամսօրեայ, 1912, 730): Գրաբարի երախտավոր բառարանագիրները, հատկապես Նոր Հայկազյան բառարանի (այսուհետև՝ ՆՀԲ) հեղինակները, ըստ ամենայնի արտացոլել են այդ նյութը: Հազարավոր բառահոդվածներում վկայությունները քաղված են Ոսկեբերանի գործերից:

Սույն հոդվածում կանոնադառնա՞նք՝ ա) Ոսկեբերանի եզակի վկայություններին, բ) Ժողովրդա-խոսակցական, բարբառային տարրերին, գ) Ոսկեբերանի գործերում առկա, բայց ՆՀԲ-ում չավանդված բառերին:

Ե զ ա կ ի վ կ ա յ ո թ յ ո Ն Ե ր

Ոսկեբերանի թարգմանություններում բազմաթիվ բառեր մեր մատենագրության մեջ եզակի կամ առաջին վկայություններն են: Մեր հաշվումներով ՆՀԲ-ն նշում է նման կարգի 700-ից ավելի բառեր: Բնականաբար, բոլոր բառերը այստեղ նշելը իմաստ չունի: Ներկայացնենք դրանք որոշ խմբավորումներով:

1. Նախադաս բաղադրիչներով կազմություններ

Ամենա—ամենաժանո, ամենահնարություն, ամենաճշմարիտ, ամենաիշխող, ամենողորմություն:

այլ—այլաբարբառ, այլակերպարան, այլակերպումն, այլայլագոյն, այլայլապէս:

ան—անազդական, անամաչելի, անանքատ, անարգելական, անարժանաւոր, անգիւղ, անժամություն, անծուի, անհանճարական, անհնություն, անձևական, անճմլելի, անմարտական, անշշուկ, անողորմելի, անպատասխանելի, անպղծելի, անտենչիկ, անփքացություն:

բազում—բազմախաղ, բազմահաճոյ, բազմահոգություն, բազմամանուածոյ, բազմավիշտ, բազմիրություն:

բարի—բարեդրուծ, բարեընկալ, բարեխօսանք, բարեհաշտող, բարեհնար, բարեմարդություն, բարեշէն, բարեպարտ:

Դժուար—դժուարադարձ, դժուարախիլ, դժուարակալ, դժուարակատար, դժուարականգնելի, դժուարակենցաղ, դժուարանք, դժուարուսանելի:

դիր—դիրախորտակ, դիրամաշ, դիրաշոր, դիրարհամարելի, դիրարուեստ, դիրաքակություն:

ընդ—ընդարձակատարր, ընդարձակերասանակ, ընդդիմադարձիմ, ընդդիմախօսել, ընդերձանիմ, ընդմիջաբար, ընդունաչնապարտ, ընդվայրախօսություն, ընդվայրընկեցիկ:

չ--չազնություն, չահագին, չարուեստ, չաւատամ, չբարի, չբնաւոր, չզարդ, չխաղոյք, չկեցու, չմեղադրություն, չմնալի, չյուսալի, չնչինագոյն, չոխակալ, չպիտոյանամ, չքություն:

չար—չարագազան, չարագործաբար, չարահաւ գործել:

վաղ—վաղակարծեմ, վաղեփեաց, վաղցասումն:

քաջ—քաջահով, քաջանուաստ, քաջասուր, քաջատեսություն:

2. Վերջադաս բաղադրիչներով կազմություններ

(ա) բար—ամբարհաւանաբար, պատճառաբար, պատուաբար, օրինաբար:

(ա)գոյն—անխօսագոյն, առատագոյն, բանաւորագոյն, գեղագոյն, ժտագոյն, ծառայագոյն, վիճաբանագոյն, տաժանագոյն:

ական—ախոյանական, ամբարտաւանական, անազդական, անարգելական, անհանճարական, անձևական, անմարտական, առաւելական, բարձրական, բեռնական, գաղտակրական, լրբաբանական, խնամածական, խըլական, կենցական, կոռական, հլուական, հպարտական, սեւական, վերածողական:

անք—բարբարանք, բարեխօսանք, բարուրանք, դժուարանք, թարթափանք, լպրշանք, խանդանք, խորշանք, խտպտանք, համեմանք, միամիտանք, յերկուանք, նովանք, շամբշանք, շքթանք, պճնանք, սաքաթափանք, ստկանք, փայփայանք, փոփոգանք:

աւոր—գոգաւոր, իշխանաւոր, կողինաւոր, հարցաւոր, հերաւոր, չբնաւոր:

բեր—բժաբեր, խաղողաբեր, կաթնաբեր:

գիր—առակագիր, հելենագիր, սպիտակագիր, պատկերագիր:

գործ—ազգագործ, առաելագործ(եմ), աւարտագործ(եմ), կապուտակագործ, ճաշագործ, յանկարծագործ, պղակունդագործ, ստուգագործ:

թիւն—ազգատոհմակցութիւն, ազնուազգութիւն, աղանդութիւն, անժամութիւն, անուշամտութիւն, բազմիրութիւն, բարեմարդութիւն, բացերեսութիւն, բնականութիւն, գունատութիւն, դաւաճանողութիւն, գերեզմանաբրութիւն, դիտութիւն, երեկութիւն, թերևագնացութիւն, ինչպիտութիւն, հմութիւն, ձեռագրութիւն, ճոխաճանութիւն, մեծերեւելութիւն:

ի—աղաչելի, անճմլելի, անողորմելի, անպատասխանելի, դժուարականգնելի, չմնալի, չյուսալի, ջեռլի:

իկ—ազդեցիկ, անտենչիկ, արագախաբիկ, բանջարիկ, բոնագբօսիկ, գերազանցիկ, գինեվաճառիկ, գողացիկ, երկրիկ, զարդասիրիկ, զբօսուցիկ, ընդվայրընկեցիկ, իրաւացիկ, իղիկ, մրգիկ, նաւակիկ, ողորթիկ, պախրեիկ, պարեգօտիկ, ջրանցիկ, սենեկիկ:

իշ—աղմկիշ, հաճոյացուցիշ, մերկացուցիշ, յուրթիշ, ուտիշ, ստահակեցուցիշ, տասանորդիշ, քամահրիշ:

լից(լի)—ալպանալից, գինելից, գեղխալից, որջլալից:

կից—ախորժակից, ամուսնակից, անմարտակից, զարդակից:

միտ—զգոնամիտ, հաւասարամիտ, մորոսամիտ, տարամիտ:

ոտ(կոտ)—խոշոր, խոռվկոտ, ճերոտ, ճենճերոտ(իլ), վախկոտ, տաղտկոտ, փաղաքշոտ:

ոց(անոց)—աղբանոց, աղօթանոց, եզնանոց, ընթանոց, կապելանոց, շըմբոց, որրոց, պատկողանոց, վարժոց:

ու—երախտառու, թագաւորանարգու, նախանձառու, չկեցու:

ուն—թասուն, խարխարուն, դողուն:

ւէս—ալլալապէս, աւաղապէս, գերապէս, խոնարհապէս:

սէր—արուասէր, իշխանասէր, հեռասէր, միմեանցասէր:

Կառուցվածքային այս տիպերը խորթ չեն գրաբարին, սակայն վերը նշված բառերը առկա են միայն Ոսկեբերանի գործերում: Դրանց մի մասը գուցե թարգմանչի նորակերտություններն են, բառերի մի խումբ էլ, թերևս գործառել է գրաբարում, բայց այլ վկայություններով մեզ չի հասել:

Կարելի է առանձնացնել բառեր նաև ըստ իմաստային խմբերի: **Գույներ***. ականագոյն, ծիրանակիզն, սեւաւական, տենչասպիտակ, փաղերութիւն: **Արատ, հիվանդություն**. անդամախեղութիւն, ակնատ, գունատութիւն, դամարիլ, խելացնորութիւն, հաշմական, ճերոտ, մորոսական, մղձկեմ, շըրթնատ, որովայնաժետութիւն, փայծաղնացաւ: **Ուտելիք**. ասպակ, բանջարիկ, դեղահունդ, խորակ, կտապ, պախաճճամ, պղակունդ, տոխղութ, փոխընդեայ, քաքար: **Թոշուն, կենդանի**. ասպունակ, շաւառն, շնկնճիթ, վարդապաքաղ, փաղ: **Հագուստ, զարդ**. գունար, լկտէազարդ, կողինաւոր, մենթան, պախնաւանդ: **Արհեստ**. գինեվաճառիկ արուեստ, պատկերակոտ, պղակունդագործ: **Արհեստագործական իրեր**. ազբոց, թեւնակ, հոծիշ, շմբոց, որոթ, ստէծ:

Ավելորդ չենք համարում Պողոսի թղթերի մեկնությունից բերելու մի հատված, որտեղ ներկայացվում են ուստայնագործության վերաբերյալ մի քանի բառեր. «Իսկ կանայք յորժամ ուստայն անկանիցեն և **զկայմսն ազբոցօքն** բախիցեն և ինքեանք եւս **կկոցօքն** ընդհարկանիցեն և զայն չար խտիր համարին: Եւ դարձեալ յորժամ զթելն հոծչան հոծիցեն և ստէպ

* Մի շարք բառեր չկան ՆՀԲ-ում:

կկիցեն և ազբոցն և և ստեծն ի ստէպ հոծելոյն ընդ միմեանս բախիցին և մանաւանդ ընդ **կայման** եւս և զայս առաւել խտիրս համարին» (Ոսկ. Պող. I 806): Ընդգծված բառերից միայն **կայմ** և **կկոց**-ն են ավանդված ՆՀԲ-ում, մյուսները չկան: Ի դեպ, ՆՀԲ-ում կայմ-ը ուսույնագործության հետ աղերսվող հասկացությունն չէ, այլ «նավի կայմ», իսկ կկոց «գործի կկելոյ» բառով քերված օրինակներում Ոսկեբերանից հղում չկա: Սրանք ժողովրդա-խոսակցական լեզվի տարրեր են, որոնք բավական շատ են Ոսկեբերանի թարգմանություններում: Պայմանականորեն դրանք անվանում ենք **Գրական նորմային հարող բառապաշար**: Սա բառապաշարի այն շերտն է, որ XIX դարի մեր երախտապարտ ուսումնասիրողները անվանում են **ռամկական**, որն իր մեջ ըստ էության ներառում է ժողովրդա-խոսակցական և բարբառային բառերը: Ռամկական բառեր հասկացությունը այսօր կարիք է զգում փոխարինելու ավելի գիտական համարժեքով: Երբեմն օգտագործում են **խոսակցական** կամ **բանավոր լեզվին բնորոշ բառեր** անվանումը: Բայց քանի որ V դարի գրաբարը նաև խոսակցական լեզու էր, այս դեպքում հստակ չեն գրավոր (գրական) և բանավոր (խոսակցական) լեզվի սահմանները: Էլ չենք խոսում այն մասին, որ նյութը բաղում ենք մատենագրությունից՝ այսինքն՝ գրավոր-գրական լեզվից: Առարկելի է և **բարբառային բառեր** անվանումը,, որովհետև այն նախ և առաջ ենթադրում է տարածքային տարբերակ, իսկ վաղ գրաբարի կտրվածքով հնարավոր չէ բացահայտել լեզվի տարածքային յուրահատկությունները: Եթե ուսումնասիրողը առանձնացնում է որոշ բառախմբեր՝ բարբառային բառեր որակումով՝ ցույց չտալով, թե դրանք որ տարածքին են բնորոշ, ապա բարբառային և ժողովրդախոսակցական բառեր հասկացությունները ըստ էության մնում են չտարրորոշված*: Հարմար չենք գտնում և գրաբարից շեղվող ձևեր անվանումը, քանի որ այդ բառերն էլ գրաբարյան են, և հըստակ չեն շեղումները պայմանավորող չափանիշները: Նշված հանգամանքները հաշվի առնելով շրջանառության ենք դնում **գրական նորմային հարող բառապաշար** հասկացությունը՝ ընդգրկելով և՛ բարբառային, և՛ խոսակցական, բանավոր լեզվին բնորոշ տարրերը: Վերջին հաշվով, դրանք ինչքան էլ ինչ-ինչ հատկանիշներով առանձնանում են զուգահեռ գրական ձևերից կամ համանիշներից, այդուհանդերձ կիրառվելով գրավոր-գրական լեզվում, անշուշտ հարում են այդ լեզվի նորմային, մանավանդ, որ այդ բառերի զգալի մասը հետագայում գրական բառապաշարի մեջ է ընդգրկվում: Չենք ժխտում, որ մեր առաջարկած անվանումն էլ առարկելի է, բայց ընդունենք պայմանականորեն և ներկայացնենք նյութը: Այս կարգի բառերի տարբերակման համար հաշվի են առնվում մի քանի ընդհանուր և հիմնական հատկանիշներ՝ բառակազմական որոշ յուրահատկություններ, բառերի զանազան տարբերակային ձևերի առկայություն, համանիշային շարքերի առկայու-

* Որոշ հատկանիշների կիրառումով բարբառային տարրեր է առանձնացնում Գ. Զահուկյանը (Զահուկյան 1972, 1982, 1987): Ի տարբերություն նախորդների նա առաջադրում է մի քանի սկզբունքներ ու եղանակներ, որոնցով տարբերակում է լեզվական միավորի բնույթը՝ բարբառային, թե հասարակական-գործառական կամ ոճական արժեք ունենալը (Джаукян Г., 1982, 8—10): Տեսական այս նորույթը չափազանց գնահատելի է և անշուշտ կգտնի իր հետագա զարգացումը: Սակայն ծավալուն նյութի առկայության դեպքում, գոնե կոնկրետ տարածքների զատորոշման հարցում այստեղ ևս դժվարություններ են առաջանում:

են: Այսպես, իրանական փոխառություններ են աշխարաւանդ, խորակ, մենթան, պախնաւանդ: Խումաւագութիւն և վատգոհարութիւն բառերի առաջին բաղադրիչները նույնպես իրանական են: Հունական փոխառություններ են. արգաստեր, բարբարիկ, լկտի, մեթեմ, միմ, միւսիոն, պանդեմի, պրիտան: Եբրայական փոխառություն է ովփազ-ը:

Ավելին, որոշ բառերի նույնիսկ իմաստները ստույգ չեն: Ի՞նչն է սրանց ստուգաբանության և իմաստի ճշգրտման դժվարությունը: Անշուշտ, այս շարքում չպետք է բացառել սխալագրության, գրչագրական աղավաղումների գործոնը: Բայց այսպիսի մեծաքանակ նյութի դեպքում վերոհիշյալ գործոնը դեռևս միակ և վճռորոշը չէ: Մեր կարծիքով, Ոսկեբերանի թարգմանիչը (թարգմանիչները) առատորեն օգտագործել են կենդանի ժողովրդական բառ ու բանը, բարբառային տարրեր, որոնք էլ դժվար ստուգաբանելի են, մանավանդ, որ դրանք եզակի վկայություններ են և այլ հեղինակների մոտ չկան, կամ վկայված են բավական ուշ շրջանից: Անդրադառնանք մի քանի բառերի քննությանը: **Նիտալ**-ը վկայված է մեկ անգամ: «Յորժամ կարի զխորտկօքն գայցեմք, իբրեւ տիկ ուռուցեալ **նիտայցէ** որովայնն»: ՀԱԲ-ը ընդգծված բառը մեկնում է «տկոելուց հեալ»: Մեր կարծիքով այն նշանակում է «անհագ ուտել», որի հետ ակնհայտ զուգահեռ է Ղարաբաղի բարբառի **նիտալ**-ը նույն իմաստով: Բառը կազմված է **նի** «ներս» և **տալ** բաղադրիչներով՝ փոխաբերացված՝ «ուտել»: (Պողոսյան, 1974, 129, Հովհաննիսյան, 1979, 55): Ի դեպ, մի քանի բառեր զուգահեռներ ունեն Ղարաբաղի բարբառում. **ծլիմ** «վախենալ», **կնպեմ** «սեղմել» և այլն:

Կնպեմ-ն էլ եզակի վկայություն է: Ահա ՆՀԲ-ի բերած միակ օրինակը. «Գրեթէ ամենայն ինչ արեամբն սրբեր. ընդէ՞ր գրեթէ ասիցէ և ընդէ՞ր կրնայիցէ», ՀԱԲ-ը Ոսկեբերանից նշում է և **կնպետ** «ամփոփ, սեղմած» բառը: Մեր կարծիքով բառի արմատն է կուծ (կիծ-ը որից՝ **կծիկ**, **կծկիլ**: Ծ/Ճ տարբերակների համար հմմտ. **կծել** «խայթել» և բարբառային **կնան**: Վերոհիշյալ արմատն է թերևս և բարբառային **կուշ գալ** «կծկվել» բառում՝ **ն**-ի հետագուշնչեղացմամբ:

Ըմփորոտեմ «ուռեցնել»-ի համար ենթադրելի է ընդ-փոր(ոտել) կազմությունը. հմմտ. ըմբերանեմ, ընդվզեմ և նման կարգի այլ բառեր ուղղակի և փոխաբերական իմաստներով:

Քարուակ «ամոթալի գործ, խայտառակություն»: ՀԱԲ-ում ստուգաբանված չէ: Ամենայն հավանականությամբ իրանական փոխառություն է՝ **la** «գործ» և **vak** «խոսք» բաղադրիչներով. բառացի «խոսքի առարկա դարձնել»: Իրանական փոխառություններից այդ կարգի ակնհայտ զուգահեռ է **նշաւակ**-ը: Ի դեպ, այս երկու բառերը կողք-կողքի գործածում է Ոսկեբերանի թարգմանիչը. «Ասացից եւ առ ձեզ, որ նշաւակիքդ և քարուակ կայք ի հրապարակս» (Ոսկ. Մտթ. 229):

Քեծ «թույլ, անգոր, տկար»: ՀԱԲ-ը վկայում է միակ օրինակը Ոսկեբերանից. «Դու զվատի և զյոռոյ և զքեծի զօրականի բանս խօսիս»: Ստուգաբանության որևէ փորձ չի արվում: Ըստ երևույթին բառը կապվում է բարբառային քաժ «էգ, էգ շուն» զուգահեռի հետ: Նախ՝ բառաձևի մասին: Ինչպես տեսանք, Ոսկեբերանի մոտ կան բավական մեծ թվով հնչյունային տարբերակներով ձևեր, կանոնական բառաձևերից շեղումներ. **ա/ե** տարբերակներով նույնպես կան հմմտ. աղաւաղել (աղեւաղել) Ոսկ. Պող. II, 617): Ինչ վերաբերում է իմաստային անցմանը, ապա դա նույնպես բացառելի չէ: ՀԱԲ-ում **Քաժ** բառի ստուգաբանության պատմության մեջ բերվում է

այսպիսի մի գուգահեռ. լատիներեն mulier «կին» <mollis «թույլ, որը թույլ է տալիս էգ→կին→թույլ անցումը տեսնելու գրաբարում: Բոլոր դեպքերում Ոսկեբերանի թարգմանությունների բառապաշարի մի սովոր քանապործում մնում է չստուգաբանված: Դրանց ծագման, իմաստների ճշգրտման գործում մեծապես կօժանդակի հայ բարբառների տվյալների հաշվառումը:

Կենդանի խոսքի, ժողովրդական մտածողության դրսևորումներ են այն բազմաթիվ ոճերը, դարձվածները, բառերի փոխաբերական իմաստով կիրառությունները, որոնք գտնում ենք Ոսկեբերանի թարգմանություններում: Բերենք մի քանի օրինակներ. «Մի ասէ, գիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջդ», «Եւ առ այս ոչ բերան անգամ կարեն բանալ լարշական հրէից ազգի որդիքն» (Ոսկ. Ես. 6): «Մինչեւ ցե՛րք յերկուս ոտս կաղայցէք» (Իմա. չհասկանալ) (Ոսկ. Պող. I 255): «Եթէ պոռնկիցի, ասէ, զինչ տայցես առնել: Առն տոր (իմա՝ ամուսնացրու), հատ զպատճառս պոռնկութեանն» (834): «Տես ուր տարաւ եհան զնա» (Ոսկ. Պող. II 355): «Թթու բանիւք խօսի» (Ոսկ. Պող. II 719): «Էր վասն, ասա ինձ, զպարանոցդ ի վեր ձգես, ընդէր զնաս ի ծայրս մատանցդ, հի՛մ զյօնսդ ի վեր պարզես, ընդէր զլանջսդ այտուցանես. դու որ չկարես մազ մի սպիտակ առնես կամ թուխ և որպէս թէ ամենակալ ոք իցես՝ այնպէս ամբարտաւանս ճեմիս» (Ոսկ. Պող. II 303): Այս վերջին նախադասության մեջ մարմնի մաս արտահայտող գոյականները կապակցությունները փոխաբերաբար արտահայտում են «գոռոզություն, ամբարտավանություն, մեծամտություն» իմաստները:

Արդեն V դարից գրաբարում հաճախական են նման օրինակները: Առավել հետաքրքրական են այն դեպքերը, երբ նույն բառը հանդիպում է և՛ բուն, և՛ փոխաբերական կիրառությամբ, որը վկայում է, որ փոխաբերացման գործընթացը դեռ շարունակվում էր տվյալ ժամանակահատվածում: Բերենք երկու օրինակ. «Բնակութիւն քո երկնից երկինք են՝ աներեւոյթ անձեռնհաս ձեռին մերոյ» (Գ. Մկր. Բ. 8): «Իսկ սա զերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեջերէն, թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ» (Խոր. 218): Այս օրինակներում ընդգծված բառերը իրենց բուն կիրառությամբ են հանդես գալիս, իսկ ներքոգրյալներում արդեն առկա է փոխաբերությունը: «Հայք դեռ եւս ինքեանք անձեռնհաս են և վտանգեալք (Փարպ. 146): «Սա ընդվզեալ մեռանի յԱղեքսանդրէ Մակեդոնացոյ» (Խոր. 86):

Ոսկեբերանի գործերում կարելի է առանձնացնել մի շարք բառեր, որոնք նոր իմաստներ են արտահայտում: Այսպես, այգուց ըստ ՆՀԲ-ի ունի «առավոտյան, վաղ» իմաստը, իսկ Ոսկեբերանի մոտ նաև «վաղը, էգուց». «Որ այսօր սպառնայ և այգուցն վախճանի, որ այսօր ի հարստութեան և այգուցն ի թաղման... որ այսօր ի գանձս և այգուցն ի շիրմի, որ այսօր է և այգուցն ոչ է» (Ոսկ. Պող. II, 673): Ստորև բերում ենք ՆՀԲ-ից քաղված մի քանի բառեր, սկզբում նշելով ընդհանուր իմաստը, այնուհետև այն իմաստը, որ առկա է Ոսկեբերանի մոտ: Անհաւատարիմ—«ոչ հավատարիմ»—«ոչ ապահով», ընկալուչ—«ընդունող, ընդունիչ» — «խոսնայր, փեսա», մարտիկ—«մարտնչող» — «մրցարան», ներքան «ոտի ներքան»—«կոճղ», շրջական «շրջող»—«փոփոխություն», ողողանեմ «հեղեղել»—«ողբալ», սիգալ «պերճանալ, հպարտանել»—«իգանալ», վարդենի «վարդի թուփ»—«ծաղկաստան», վտարանդութիւն «պանդխտություն»—«երկրայություն»:

Ն Հ Բ - ու մ Զ վ կ ա յ վ ա ծ բ ա ո ե ր

Ինչպես նշել ենք, գրաբարի բառարաններում ըստ կարելիվույն օգտագործված են Ոսկեբերանի թարգմանությունների տվյալները, այդուհանդերձ

զգալի թվով բառեր դուրս են մնացել ՆՀԲ-ից: Քիչ հետո կբերենք մեր նկատած նման կարգի բառերի մի ցանկ: Նախքան այդ ասենք, որ շատ բառեր էլ թեև գետեղված են ՆՀԲ-ում, բայց Ոսկեբերանից վկայություն չկա, ընդ որում այդ բառերի մի մասը ուշ շրջանից են քան Ոսկեբերանի թարգմանությունները: Այսպես, Պողոսի թղթերի մեկնության (հատոր II) մեջ հանդիպող հետևյալ վկայությունները չկան ՆՀԲ-ում. աղիսագործություն (79), անասնապէս (80), անասնեղէն (805), բարձրամիտ (303), բրաբիա (88), բրդզգեալ (115), գետնախշտություն (36), դիմամարտ (323), դիրալոյց (345), դիրամոռանալի (772), ծայրաքաղ (592), կրպակաւոր (589), հոսական (296), միգապատ (728), յորձանահոս (404), նախալախնանեալ (449), նախապատուեմ (321), նեղափողոց (132), Շողիք (92, 93), շրթնատ (295), սրտակիզեալ (214), վերակոչումն (732), վերանստիմ (761), տիրունի (730), տղայասպան (759), տնկակցություն (98), փաղաքշոտ (162):

Անցնենք ՆՀԲ-ում չվկայված բառերին՝ ըստ համապատասխան գործերի*:

Ոսկեբերանի Եսայու մեկնության մեջ հանդիպում ենք հետևյալ բառերին. Խորարթուն (424), «հեռասէր, կովասէր» (152), Մարդաշախորժ (154): Վերջինս վկայված է միայն ՀԱԲ-ում: **Խորարթուն** վկայված է հետևյալ համատեքստում. «Քանզի ոչ կոուէին ընդ դեւս վնասակարս և ոչ փախչէին ի վնասակարացն, այլ իբրեւ ի քուն իմն ի խորարթուն՝ ետուն զանձինս յափշտութիւնն»:

Բառը ունի միայն ԱԲ-ն՝ «խոր քուն» բացատրությամբ: Թերևս առարկելի կարող է չլինել **խորաքուն** ուղղումը: Ծիշտ է, վերոհիշյալ բառը չունեն ՆՀԲ-ն և ԱԲ-ն, բայց մենք նման բառի հանդիպել ենք Եվսեբիոս Եմեսացու ճառերից մեկում (V դար): «Այլ յորժամ պարտ էր սկսել, յայնժամ խորաքուն լինէին գլխաւորքն» (ՀԱ, 1956, 399): Սակայն անվերապահորեն չի կարելի ընդունել առաջարկված ուղղումը: «Դժվար արթնացող» իմաստով Ոսկեբերանի թարգմանիչը հենց նույն էջում օգտագործում է **ծանրարթուն** բառը: Ըստ էության **խոր** և **ծանր** ածականները համանիշներ են:

Ոսկեբերանի Պողոսի թղթերի մեկնության մեջ (հատ. Ա). Ազբոց «ոստայնագործական իր» (806), աղբակիր (782), աղբալից (803), բայբաներ «հականառություն (219), բարամբուն «վանդակի ձող» (828), գասրիմ «չհագենալ» (237), եկապաշտ** «հացկատակ» (870), երկրապաշտ «աշխարհասէր» (29), ընդարձակասէր (234), ըմփորոտեմ «ուռեցնել» (242), թաղաթափ «մերկ» (835), թաղնորդ «նույն թաղում բնակվող» (832), թերայրեաց (782), ժմերտ «լիրք» (834), լաբարոն «գինանշան» (25), կնպետ «ամփոփ» (935), հեղեղակոծ (808), հոծիշ (գործիք) (806), դորտոս «մորացկան» (813), ճարտարագիտեմ (239), մունաւոր «վայելուչ» (530), նալական «խոնավ» (803), նսին «կախարդ» (28), նրբակառափ «նրբագլուխ» (29), ողողորթիք «հեղեղ» (111), պախանճամ «ուռելիք» (569), պսեմն

* Ծավալի պատճառով նախադասությունները չենք բերում, նշում ենք միայն էջերը: Օրինակները կբերենք միայն որոշ նկատառումներ ունենալու դեպքում:

** Եկապաշտ հանդիպում է մեկ անգամ. «Պիղծ և բիրապատիկ չարեօք լի յինչս վայելէ և զբոզս պարարէ և զեկապաշտս կերակրէ և ի տունս գեղեցիկ բնակէ» (870): ԱԲ-ի «հացկատակ» բացատրությունը թերևս այս վկայությունից է: Մեկ այլ տեղ՝ երկրապաշտ. «Ոմանք բոզից գեղուն տան և այլք երկրապաշտից» (29): Նախընտրելի է վերջին ծնը:

«փուշ» (399), սամտի «պոռնիկ» (833), ստեծ (գործիք) (806), ստկանք «սուտ բաներ» (49, 50), քաջանայեաց (79), քեծ «թույլ» (919):

Նույն գրքից (հատ. Բ) Ակնատ «առանց աչքի», անդնդամուխ լինեմ (764), անմարթուշ «տգետ» (374), ամիրոդիսեան (492), բացբարձիշ «վերացնող» երաձգեմ «բարձրացնել» (594), դժուարահոտ «վատ հոտ ունեցող» (93), երեքայարմար «երեքին հարմար» (783), թնահատ «խաղողի հատ» (446), խելաթափ (165), խոնոտեալ «խոտն դիզված» (641), կահատ» (446), խելաթափ (165), խոնոտեալ «խոտն դիզված» (641), կահատ» (446), կայթիկ և պայթիկ «խաղ ու պար» (251), կորթատ (295), հակառակամիտություն (629), համակակոյր (617), համտիկ (603, 604), հայելարան «տեսարան» (688), ճաճանչաբեր (194), մանկադեմ (644), ճախերիցություն (298), ներագիր «ներսը գրված» (688), շնծեր «շնացող ծեր» (650), որդեգեն (213), որովայնակոչություն (հմայական հնարք), սպասատրուհի (692), ստորահարկանեմ «ոտքը գետնին խփել» (581), վարձատրություն (624), վերժամանեմ «բարձրանալ» (726), տենչասպիտակ (760), տկեղծ «անչափահաս» (492), քարավրիժություն «գահավիժություն» (45), քանրերգող «քնարահար» (143), փիլիսոփայագոյն (176):

Որոշ նկատառումներ վերոգրյալ մի քանի բառերի շուրջ.

Գերաձգեմ—վկայված է հետևյալ համատեքստում. «Եւ... ուր գերաձգեաց զհոգին և էած ի վեր զմիտս լսողացն» (594): Կիլիկյան թարգմանության մեջ բառը պակասում է. «...Յոր վայր զսիրտ և զմիտս մեր ձգէ» (Ն. տ.):

Թնահատ—«եւ որթն որ այնչափ գեղեցիկ է ի տեսանել և քաղցր ի ճաշակել, յանպիտան թնահատէ լինի» (446): Ծանոթագրվում է, որ այլ օրինակներում **հատնէն** է: **Հատին** նշանակում է «կուտ, կորիզ»: ՆՀԲ-ում **հատին**-ով վկայությունը Ոսկեբերանից չէ:

Համտիկ—վկայված է երկու անգամ. «...ո՞չ համտիկ հաւասարություն էր» (693): «Այլ զի ասէ լուար ինձ, զայս և առ բարեկամս ասէ և առ համտիկս պատուակիցս» (604): Կիլիկյան թարգմանության մեջ համապատասխանաբար՝ **համապատի միականություն** և **հանգիտապատիւսն** (Ա. տ.): Գուցե բառը ուղղելի է **համատիք** «հասակակից»: Այս դեպքում էլ չի հարմարում կիլիկյան թարգմանության համապատասխանակը:

Ստորահարկանեմ—«Ոչ ի համաձայնողին վերայ գերզս ելանելով և ոչ զկաքաւիշ ոտամբն ստորահարկանելով» (581): ԱԲ-ի «ոտքը գետնին խփել» բացատրությունը նկատի ունի անշուշտ այս օրինակը:

Տենչասպիտակ—«Զի գեղեցկավայելուչն ծաղկեալ գարունն զծաղկանցն բոյսս տենչասպիտակ գունովք ի վեր բաղկացոյց» (760): Թերևս ունի «սպիտակերանգ» նշանակությունը: ԱԲ-ի «աղվոր ճերմակութեամբ» բացատրությունը նկատի ունի այս եզակի օրինակը:

Տկեղծ «տղայամիտ, խակ»—Քանզի ոչ եթէ առ տգիտութեան ինչ և ոչ առ խակութեան և ոչ վասն տկեղծ հասակի, այլ ի ծուլութենէ» (492): Մեկ այլ տեղ. «Որպէս ծէրք ի ծերութեան խակք իցեն և տկեղտ» (494): **Տկեղծ** չունի ոչ ՆՀԲ և ոչ ԱԲ-ն: Նշում է միայն ԱՐՄ-ը: Ա. Վարդանյանը առաջարկում է **տկեղտ**-ը ուղղել **տկեղծ**: Աճառյանը իրավացիորեն մերժում է այդ ուղղումը, որովհետև այդ կարգի լծորդ ձևեր հայերենին խորթ չեն. հմմտ. **պարծ**—**հպարտ**: Մանավանդ որ Ոսկեբերանի մոտ նման բնույթի տարբերակներ առկա են: Երկու ձևերն էլ պետք է բառարանագրվեն:

Քարավրիժություն—«Ի բիր քարավրիժութիւնս մղեմք զշուռականսն զայնոսիկ և զհէքս» (45): ԱԲ-ն մեկնում է «քարավրիժութիւն», իսկ վերջինս

որպես գլխաբառ բացատրում է «գահավիժություն»։ Թվում է, թե **գահավիժություն**-ի համաբանությամբ բառը կարելի է ուղղել՝ **քարավիժություն**, բայց անվերապահորեն չենք կարող դա պնդել, որովհետև հենց ԱԲ-ն վկայում է նաև քարավրէժ «քարկոծում» բառը։ Ոսկերեքանի մոտ հանդիպող **քարավիժություն**-ն էլ պետք է թարգմանել ոչ թե «գահավիժություն» այլ՝ «քարկոծություն»։

Ոսկերեքանից մեզ հանդիպել է մի շատ ուշագրավ բառ, որը ընդհանրապես ծանոթ չէ հայ բառարանագրությանը. Դա **պատման** բառն է. Ահա այդ եզակի վկայությունը. «Նուագագոյն քան զնոսա արար զսա չափով. մարմնով փոքր ինչ հասակաւ պատման» (Ոսկ. Պող. I, 867)։ Մեր կարծիքով բառը անպայման առնչվում է իրանական *patman* «չափ»-ի հետ։ Ուշագրավ է, որ հայերեն **պայման** «չափ» նույնպես իրանական փոխառություն է, աղերսվելով դարձյալ նույն իրանական արմատի հետ։ Իրանագիտությանը այժմ հայտնի է, որ պարթևական *pat* մասնիկը պարսկերենում ներկայանում է *pay* ձևով։ Ըստ հնչյունական այդ օրինաչափության հայերենի իրանական մի շարք փոխառություններ տարբերակվում են պարթևական և միջին պարսկական շերտի։ Այսպես, պարթևերենից են **պատմունակ, պատմունան, պատուաստ, պատկեր....** միջին պարսկերենից՝ **պայքար, պայուսակ, պայազատ** և այլն։ Ուրեմն, **պատման**-ի դեպքում գործ ունենք պարթ. *pat(i)man* ձևի հետ, որն ավելի հին փոխառություն է քան պայմանը։ Եթե մեր նկատառումները այս բառի շուրջ արդարանան, ապա գործ ունենք հնագույն մի գեղեցիկ վկայության հետ, որն անպայման պետք է բառարանագրել։

Ամփոփենք։ Ոսկերեքանի երկերի խոր և բազմակողմանի ուսումնասիրությունը զգալի նյութ կտա գրաբարի բառապաշարի նոր իրողությունների բացահայտման գործում։ Այսօր հայ բանասիրության առաջնակարգ խրճիթներից մեկը պետք է լինի այդ գործերի քննական բնագրերի հրատարակումը, որը մեծ նպաստ կլինի հայագիտությանը։

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Պոլիս, 1895:

Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:

Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

Յովհաննու Ոսկերեքանի մեկնութիւն թղթոցն Պօղոսի, Վենետիկ, 1862:

Յովհաննու Ոսկերեքանի մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1880:

Յովհաննու Ոսկերեքանի ճառք, Վենետիկ, 1861:

Հովհաննիսյան Լ., Բառային հնաբանություններ Ղարաբաղի բարբառում («Լրաբեր» հասարակական գիտությունների, 1979, 9):

Պողոսյան Ա., Նի մասնիկը և նրա բառակազմական նշանակությունն ու իմաստային առումները հայերենի բարբառներում (Պատմա-բանասիրական հանդես, 1974, 2):

Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972:

Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Եր., 1987:

Джаукян Г., Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982.